

ԵԿԵՂԵՑԱԳԻՏԱԿԱՆ

ՍԱՐԿԱԼԱԳԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՋ

Սարկալագուծիները քրիստոնէական եկեղեցւոյ նուիրապետական աստիճաններէն առաջինն է, որ ձեռնադրութեամբ կը շնորհուի տեղւոյն եպիսկոպոսին կողմէ: Անոր մասին մեր ունենալիք ծանօթութիւնը կարեւոր է այն իմաստով որ ան առաջին քայլն է որ կը բացուի քահանայական եւ եպիսկոպոսական աստիճաններուն:

1. Սարկալագ բառին ծագումն ու իմաստը

«Սարկալագ» բառի ծագման մասին աստուածաբանական եւ լեզուագիտական բառարաններուն մէջ կը գտնենք բազմաթիւ բացատրութիւններ: Ըստ Հայկազեան բառարանին, «սարկալագ» բառը կազմուած է ՍԱՐ (գլուխ) եւ ԱԻԱԳ (բառերէն): Ուրիշ բառարաններ կը կարծեն թէ «սարկալագ» բառը առնուած է լատիներէն ՍէՔՐը բառէն կամ պարսկերէն ՍէՏէՐ կամ ՍէՐԳէՐ բառէն, որ կը նշանակէ «սարկալագներուն աւագը» կամ «գործերու վերակացու»: Հր. Աճառեան «սարկալագ» բառը կը բացատրէ որպէս ՍէՐ (գլուխ) եւ ԿԱԻԱԳ (սպասաւոր) արմատ բառերու զուգորդումով: Ըստ Oxford Dictionary of the Christian Churchի «սարկալագ» բառը ծագում առած է յունարէն δῆκονος բառէն, որ «սպասաւոր», «լրաբեր» կամ «վազող» կը նշանակէ:

Սուրբ Գրքին մէջ «սարկալագ» բառը կը նշանակէ ծառայ կամ վերատեսուչ: Հին Կտակարանին (միայն Եսթերի գրքին մէջ (2.2: 6.3)), եւ Նոր Կտակարանին մէջ (Մատթ. 20.28, Հռոմ. 12.25, Եփես. 3.7) այս իմաստով գործածուած է բառը:

Հին Ժամանակներուն, «սարկալագ» բառը գլխաւոր երեք իմաստներով կը գործածուէր.՝

ա. ծառայ կամ սպասաւոր, որ քահանային կը ծառայէ Ս. Պատարագի կամ Ս. Հաղորդութեան ընթացքին:

բ. պաշտօնեայ նուիրապետական եկեղեցւոյ մէջ եւ անդամ հոգեւորական դասին, քահանայէն կրտսեր:

գ. օգնական կամ վերակացու, որ քահանային կ'օգնէ տարբեր ձեւերով:

Թէ՛ Եօթնասնից եւ թէ՛ Յոյն դասական հեղինակներուն քով, «սարկալագ» բառը ունի աշխարհիկ իմաստ, թէեւ Յովսէփիոս եւ Էփիկղէզով յաճախ բառը կը գործածեն «ծառայ» Աստուծոյ իմաստով: Իսկ հեթանոս շատ մը պաշտամունքային գիրքերուն մէջ կը յիշատակուին «սարկալագներ», իրենց պաշտամունքին մասնակցող պաշտօնեաներու շարքին, առանց ճշգրիտ իմաստի: Շատ մը պարագաներու, սակայն, «սարկալագ» բառին սերտ կապակցութիւնը «տղոց» եւ «խոհարարներու» պաշտօններուն հետ, ենթադրել կու տայ սպասաւորներու կամ ստրուկ ծառաներու պաշտօնները: Աստուածաշունչին մէջ «սարկալագ» բառի գործածութեան, ներկայ իմաստով, կը հանդիպինք միայն Նոր Կտակարանի Պօղոս Առաքեալի թուղթերուն մէջ:

2. Սարկալագութիւնը Առաքելական Դարուն (Առաջին Դար)

Սարկալագուծիները քրիստոնէական եկեղեցւոյ նուիրապետական կառոյցին մէջ

ամենէն կրտսեր կամ առաջին աստիճանն է: Սարկաւագին պաշտօնը այնքան հին է որքան Քրիստոնէութիւնը ինք եւ կարելի է ըսել, որ սարկաւագութիւնը եպիսկոպոսական եւ քահանայական պաշտօններէն առաջ հիմնուած է, շատ հաւանաբար 34/35 թուականներուն: Սակայն եւ այնպէս, ան մնաց եկեղեցւոյ պաշտօնէութեան մէջ, որպէս տիրական, անհրաժեշտ եւ կարեւոր պաշտօն մը:

Սարկաւագութիւնը պաշտօն մըն է, որ կը պատկերացնէ եկեղեցւոյ պատմութեան սկզբնական էջերը: Հեղինակ մը կը կարծէ որ սարկաւագութիւնը երէցներու դրութեան սկիզբը կարելի է նկատել, որ հոգ կը տանի եկեղեցւոյ պէտքերուն: Այս կազմակերպութիւնը, կը կարծէ հեղինակը, կրնայ յառաջ եկած ըլլալ Յուդայական Զէքէնիմ (*Zekenim*) կազմակերպութենէն կամ Քումրանի (*Qumran*) եղբայրակցութենէն: Սակայն, յստակ է որ սարկաւագութիւնը ատկէ աւելի է, որովհետեւ, ինչպէս պիտի տեսնենք, սարկաւագները եկեղեցւոյ պէտքերը հոգալու իրենց պաշտօնին կողքին, նաեւ կը զբաղէին քարոզութեամբ եւ մկրտութիւն կը կատարէին:

Առաքելական դարուն (առաջին դար) սարկաւագներուն եւ անոնց կատարած պաշտօններուն մասին մեզի տեղեկութիւն կը հայթայթեն Գործք Առաքելոցը, Պօղոս Առաքեալի թուղթերը եւ քրիստոնէական աւանդութեան առաջին վկայութիւնները: Քրիստոնէական աւանդութեան եւ Գործք Առաքելոցի (6.1-5) տեղեկութեանց համաձայն, սարկաւագութիւնը կը կազմուի Երուսաղէմի առաջին քրիստոնէայ համայնքին համար եւ առաքելական խումբի կողքին կազմուած այս խմբակը ծանօթ էր որպէս «Եօթի» խմբակ:

Կարգ մը սուրբգրային մասնագէտներ ուսումնասիրած են «Եօթի» այս տեսակէտը եւ հասած են այն եզրակացութեան որ «Եօթն» Նոր Կտակարանին մէջ «սարկաւագ» չեն կոչուած եւ այնպէս կը թուի թէ մինչեւ Երանոս Հայրապետի ժամանակը (Ք. Ե. 180 թ.) ճանչցուած չեն որպէս սարկաւագներ: Մեր կարծիքով, ասիկա քիչ մը չափազանցութիւն է, որովհետեւ Պօղոս Առաքեալ իր թուղթերուն մէջ, սարկաւագներուն եւ անոնց բարոյական կեցուածքին մասին յստակ ընգծումներ կը կատարէ: Առաքելական դարու միւս հայրապետները՝ Կղեմէս Հոռոմայեցին եւ մանաւանդ Իգնատիոս Հայրապետ, սարկաւագներուն պաշտօններուն մասին աւելի բացայայտ եւ յստակ տեղեկութիւններ կը փոխանցեն: Գործք Առաքելոցի հեղինակը «սարկաւագ» բառը չի գործածեր այս Եօթը ընտրուած սաներուն համար, այլ «սպասարկել» բայն է որ կը գործածէ, ցոյց տալով թէ անոնց պաշտօնն էր սեղաններուն սպասարկել: Գործք Առաքելոցին համաձայն (6.1-6).

«Այն օրերը երբ աշակերտները շաւղան Հելլենացիներուն կողմէ տրտունջ մը եղաւ Եբրայեցիներուն դէմ վասն զի իրենց որբեայրիները ամէն օրուան ողորմութեան մատակարարուելուն ատեն անտես կ'ըլլային: Տասներկուրդ կանչեցին աշակերտներուն բազմութիւնը ու ըսին. «Մեզի չի վայելեր Աստուծոյ խօսքը ձգել ու սեղաններու ծառայութիւն ընել: Ուստի, եղբայրներ, ձեզմէ եօթը հոգի ընտրեցէ՛ք՝ բարի վկայուած, Սուրբ Հոգիով եւ իմաստութեամբ լեցուն, որպէս զի զանոնք այս գործի վրայ դնենք եւ մենք աղօթքի ու Աստուծոյ խօսքին պաշտօնով պարապինք»: Այս խօսքը բոլոր բազմութեան առջեւ հանդէս երեւեցաւ. ուստի ընտրեցին Ստեփանոսը, հաւատքով ու Սուրբ Հոգիով լեցուն մարդ մը, Փիլիպպոսը, Պրոքորոսը, Նիկանովրան, Տիմովնան, Պարմենան եւ Նիկողայոս նորահաւատ Անտիոքցին եւ ասոնք առաքելակներու առջեւ կայնեցուցին: Անոնք ալ աղօթք ընելով՝ ձեռներնին անոնց վրայ դրին»:

Սարկաւագները, ինչպէս ցոյց կու տայ Գործք Առաքելոցի ընթերցումը, ընտրութենէն անմիջապէս ետք, իրենց պաշտօնին կը նշանակուին ձեռնադրութեամբ, յունախօս համայնքին պէտքերը մատակարարելու համար: Քրիստոնէական եկեղեցւոյ կազմակերպման պատմութեան մէջ, կարեւոր դեր ունեցաւ յունախօս համայնքը: Այս համայնքին անդամներուն մեծամասնութիւնը հրեաներ էին, որոնք Հրէաստանէն դուրս ծնած եւ սնած էին, ինչպէս Աղեքսադրիա (Եգիպտոս) եւ այնպիսի գաւառներ, ուր տիրապետող լեզուն յունարէնն էր: Այդ հրեաներէն ոմանք Հրէաստան ծնած բայց արամէախօսներ էին:

Գործք Առաքելոցի ընթերցումէն (6.1-6) կը տեսնենք, որ սարկաւագներ սեղան սպասարկելու պաշտօնին կողքին, կը կատարէին նաեւ քարոզխօսութիւն եւ մկրտութիւն, թէեւ միայն Ստեփանոս եւ Փիլիպպոս կը յիշուին որպէս քարոզողներ եւ մկրտողներ: Հակառակ այս վերջին երկու պաշտօններուն աղօթ եւ տարտամ վկայութիւններուն, կարելի է նկատի ունենալ այս պաշտօնները որպէս սարկաւագներուն, ոչ բոլորին անպայման, յանձնուած պաշտօններ:

Սարկաւագներու պաշտօնին աւելի մօտիկ յիշատակութիւն կը գտնենք Պօղոս Առաքելի Փիլիպպեցիներուն ուղղած թուղթին մէջ, զոր Պօղոս կը հասցէագրէ «եպիսկոպոսներուն եւ սարկաւագներուն» (1.1) եւ Փիլիպպէի ամբողջ եկեղեցւոյ: Որովհետեւ այս նամակը շնորհակալական բնոյթ ունի, Փիլիպպէի եկեղեցւոյ առաքած օժանդակութեան համար, տրամաբանական է ենթադրել որ Պօղոս իր «սարկաւագներ»ը յիշատակութեամբ կ'ակնարկէ այն պաշտօնեաներուն, որոնք պատասխանատու էին տրուած օժանդակութեան հաւաքման եւ ուղղարկման: «Սարկաւագ» բառը Պօղոս Առաքելին կողմէ գործածուած է նաեւ ուրիշ իմաստներով: Առաքելը բառը կը գործածէ բնորոշելու համար իր գործակիցները եւ իրեն օժանդակողները: Օրինակ, Աւետարանը քարոզելու իր առաքելութեան մէջ, կը յիշէ Տիմոթէոսը. «Եւ առաջնապէս զՏիմոթէով զեղբայր մեր եւ գործակից Աւետարանին Աստուծոյ եւ Հօրն Քրիստոսի» (Ա. Թես. 3.2), կամ Տիւբիկոսը (Եփես. 6.21, Կող. 4.7) եւ կամ Եպիփանը (Կող. 1.7, 4.11): Սարկաւագ բառը նաեւ Պօղոս կը գործածէ բնորոշելով իր առաքելութիւնը. «Որ եւ բաւական արար զմեզ, պաշտօնեայս նորոց կտակարանաց» (Բ. Կոր. 3.6) կամ բնորոշելու Քրիստոսի առաքելութիւնը. «Այլ ասեմ թէ Քրիստոսի սպասաւոր թլփատութեան լինել վասն ճշմարտութեան Աստուծոյ էր» (Հռոմ. 15.8):

Պօղոս Առաքելը Տիմոթէոսի ուղղած իր առաջին նամակին մէջ կը յստակացնէ սարկաւագներուն ապրելակերպը՝ ըսելով. «Նոյնպէս եւ սարկաւագունս լինին պարկեշտ, մի' երկբանս, մի' գինեսէր, մի' զօշաֆաղս, այլ ունիցին խորհուրդս հաւատոց սուրբ մտօք: Ինքեանք մախ փորձեսցին, եւ ապա ի պաշտօն մատնիցեն զի անարատ իցեն: Սարկաւագ լինիցին միոյ կնոջ արք, որոնց որդոց իւրեանց լեալ իցեն եւ տանց իւրեանց» (Ա. Տիմ. 3.8):

Այս բոլորէն կարելի է եզրակացնել որ առաջին դարուն սարկաւագութիւնը կարելի էր եւ յարգանք պարտադրող պաշտօն մըն էր:

3. Սարկաւագութիւնը Հայրաբանական Դարուն (Երկրորդ եւ Երրորդ Դարեր)

Յետ-առաքելական եւ հայրաբանական շրջանի գրականութեան մէջ, սարկաւագներու մասին եղած ակնարկութիւնները առատ են: Կան նաեւ յստակ եւ որոշ վկայութիւններ սարկաւագութեան աստիճաններուն մասին, եկեղեցւոյ նուիրապետական պաշտօնէութեան մէջ:

«Վարդապետութիւն Երկոտասան Առաքելոց»ը խօսքը ուղղելով ժողովուրդին կ'ըսէ.

«Դուք, հետեւաբար, ընտրեցէք ձեզի համար եպիսկոպոսներ եւ սարկաւագներ, որոնք Տիրոջ համար հանելի ըլլան. մարդիկ, որոնք ազնիւ, վեհանձն, հաւատացեալ եւ փորձառու ըլլան, որովհետեւ իրենց առաքելութիւնը ձեզի հանդէպ նոյնն է, ինչ որ էր մարգարէներուն եւ ուսուցիչներուն առաքելութիւնը: Հետեւաբար, դուք պէտք է արհամարհէք զանոնք, որովհետեւ մարգարէներուն եւ ուսուցիչներուն հետ անոնք յարգանքի տեղ կը վայելեն ձեր մէջ» (15.1-2):

Սարկաւագները եկեղեցւոյ հայրերու նամակներուն մէջ յաճախ կը յիշատակուին եպիսկոպոսներէն (ΕΠΙΣΚΟΠΟΣ) եւ երէցներէն (πρεσβύτερος) ետք, երրորդ աստիճանի վրայ: Կղեմէս, Հռոմի եպիսկոպոսը (Clement of Rome: Յ. Ք. 35-99), կ'ուսուցանէ թէ սարկաւագութիւնը հաստատուած է Քրիստոսի կողմէ, իր սուրբ առաքեալներուն միջոցաւ: Կորնթացիներուն գրած իր առաջին նամակին մէջ (Յ. Ք. 81-96), կը նկարագրէ եկեղեցւոյ կարգերուն աստիճանաւորումը:

«Առաքեալները աւետարանը ստացան մեզի համար մեր Տիրոջմէն՝ Յիսուս Քրիստոսէն. Յիսուս Քրիստոսէն, որ Աստուծոյ առաքուած էր: Հետեւաբար, Քրիստոսը Աստուծոյ է եւ առաքեալները՝ Յիսուսէն: Հետեւաբար, երկուքն ալ կու գան Աստուծոյ կամէն: Ուրեմն, ստացած ըլլալով հրահանգներ եւ ամբողջապէս համոզուած ըլլալով մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի Յարութեամբն ու լրիւ հաւատք ունենալով Աստուծոյ խօսքին, անոնք յառաջ եկան Սուրբ Հոգւոյն անկասկածելի վստահութեամբ որ Աստուծոյ Թագաւորութիւնը շուտով պիտի գայ: Հետեւաբար, շրջաններուն եւ փառքներուն մէջ փարփելով, անոնք [առաքեալները] իրենց առաջին պտուղները նշանակեցին, փորձեցին զանոնք Սուրբ Հոգիին միջոցաւ ըլլալու եպիսկոպոսներ եւ սարկաւագներ ապագայ հաւատացեալներուն համար: Եւ ասիկա նորութիւն չէ, այդ ժամանակէն ի վեր եպիսկոպոսներուն եւ սարկաւագներուն մասին բաւական բան գրուած է, որովհետեւ Սուրբ Գրքին մէջ տեղ մը գրուած է հետեւեալը. «Ես անոնց եպիսկոպոսները պիտի նշանակեմ արդարութեան մէջ եւ իրենց սարկաւագները՝ հաւատքին մէջ (Եւ. 60.17)» (Առաջին Նամակ Կորնթացիներուն, 42.1-5):

Կղեմէսի Եսայի 60.17-ի գործածութիւնը հարցական է, որովհետեւ Կղեմէս սարկաւագութեան պաշտօնը կը նկատէ հիմնական պաշտօն Աստուծոյ փրկագործական ծրագրին մէջ եւ ոչ ժամանակաւոր կամ պատահական ստեղծում մը առաջին դարու եկեղեցւոյ կողմէ:

Հայրաբանական դարուն, երբ եկեղեցւոյ առաքելութիւնը բնականօրէն ընդարձակուեցաւ, սարկաւագներուն պաշտօնները տեղէ տեղ տարբեր սահմանումներ ունեցան: Սարկաւագներուն պաշտօնները այս երկու դարերուն գլխաւորապէս երեք տեսակ էին:

ա. Ծիսական: Սարկաւագներուն ծիսական երկու պաշտօններն էին Աւետարանի ընթերցումը եւ ժողովուրդին ընծաները ստանալը եւ արձանագրելը: Սուրբ Հաղորդութեան ատեն, կ'օգնէին երէցին/քահանային Ս. Հաղորդութիւնը մատուցանելով կամ բաշխելով հաւատացեալներուն: Ըստ Յուստինիանոս Վկային (Justin the Martyr Յ. Ք. 100-165)

«սարկաւագները նուիրագործուած զոհագործումը կը տանէին անոնց, որոնք բանաւոր պատճառով բացակայած էին Հաղորդութեան տօնախմբութենէն»: Սարկաւագները կ'առաջնորդէին հաւատացեալները պաշտամունքի ժամանակ եւ ապաշխարողներուն եւ երախաներուն նշան կու տային որ Կանոնին (Հաւատացեալներու Պատարագին) սկսելէն առաջ եկեղեցիէն դուրս ելլէին եւ գաւիթին մէջ շարունակէին արարողութեան հետեւիլ:

Հիպպոլիտոս Հոռմէացիին (*Hippolytus of Rome* Յ. Ք. 170-235) սարկաւագը կը նկատէր եպիսկոպոսին եւ եկեղեցւոյ միջեւ եղող կապը: Եպիսկոպոսութեան աստիճանին աճումով եւ զարգացումով, սարկաւագները եղան եպիսկոպոսին անմիջական օգնական պաշտօնեաները: Իգնատիոս Անտիոքացի Հայրապետ (*Ignatius of Antioch* Յ. Ք. 35-110), Տրիլիանցիներուն ուղղած իր նամակին մէջ, զանոնք «եպիսկոպոսին խորհրդականներ»ը կը կոչէ: Հոգեւորական դասուն մէջ, Իգնատիոս ջերմ խօսքեր կ'ուղղէ սարկաւագներուն, զանոնք իրեն «ամենէն մտերիմ» անձերը կոչելով, եւ կը նախընտրէ անոնց ակնարկել որպէս իր «ստրուկ-գործակիցներ»: Իգնատիոսի համաձայն, եթէ եպիսկոպոսը զՔրիստոս կը ներկայացնէ, սարկաւագները, ուրեմն, Քրիստոսի պատկերն են որպէս «բոլորին ծառաներ»ը: Անոնց ծիսական պաշտօնին ակնարկելով կ'ըսէ. «Անոնք նաեւ, որոնք Յիսուս Քրիստոսի պաշտօնեաներուն սարկաւագներն են, պէտք է ամբողջական զոհացում տան բոլորին, որովհետեւ անոնք չեն ծառայեր պարզ կերակուրին եւ ըմպելիին, այլ կը սպասարկեն Աստուծոյ եկեղեցւոյ»:

Փոխադարձաբար, ամէն ոք պէտք է յարգանք ցոյց տայ սարկաւագներուն հանդէպ: Անոնք կը ներկայացնեն Յիսուս Քրիստոսը, ճիշդ այնպէս ինչպէս եպիսկոպոսը ունի Հօր Աստուծոյ պաշտօնը եւ երէցները (քահանաները) կը նմանին Աստուծոյ ժողովին եւ առաքելական խումբին» (Իգնատիոս առ Տրիլիանցիս 3.1, Գլ. 2.3, 7.2): Շարունակելով իր խօսքերը սարկաւագներուն մասին, Փիլիպպեցիներուն ուղղած իր նամակին մէջ, հետեւեալը կ'ըսէ. «...զորս եւ կ'ողջունեմ Յիսուս Քրիստոսի արիւնով, որ յափտեմական եւ մնայուն սէր էր, մասնաւորաբար եթէ անոնք եպիսկոպոսին հետ միութեան մէջ են եւ երէցներուն եւ սարկաւագներուն հետ, որոնք նշանակուած են Յիսուս Քրիստոսի ծառայութեան մէջ, որ իր կամքին համաձայն, հաստատեց իր Սուրբ Հոգիով» (Իգնատիոս առ Փիլիպպեցիս, Ներածական, 4.1, 7.1):

Իսկ Պողիկարպոս Զմիւռնացի Հայրապետը (*Polycarp of Smyrna* Յ. Ք. 69-155) Փիլիպպեցիներուն ուղղած իր նամակին մէջ կը խօսի սարկաւագներուն նկարագրին մասին եւ ձեւով մը կը կրկնէ Պօղոս Առաքեալին խօսքը, Տիմոթէոսի ուղղած իր նամակին մէջ (Ա. Տիմ. 3.8). «Նմանապէս սարկաւագները պէտք է անմեղ ըլլան Իր [Աստուծոյ] արդարութեան առջեւ, իբրեւ Աստուծոյ եւ Քրիստոսի ծառաները եւ ոչ մարդոց: Թող չըլլան զրպարտիչներ, երկեզու, դրամասէր, ըլլան չափաւոր բոլոր հարցերուն մէջ, կարեկից, զգոյշ, ապրող Տիրոջ նշմարտութեան համաձայն որ եղաւ «ծառայ ամենայնի»:

Կիպրիանոս (*Cyprian of Carthage* Յ. Ք. 200-258) կ'ըսէ թէ սարկաւագները հաստատուեցան առաքեալներէն «իբրեւ պաշտօնեաներ իրենց եպիսկոպոսութեան եւ եկեղեցւոյ, ուրկէ անոնց կը վստահուի սուրբ գործերու ծառայելը»: Իսկ Առաքելական աւանդութիւնը կը հաստատէ թէ «սարկաւագները փահմայութեան համար չեն ձեռնադրուած, այլ որպէսզի եպիսկոպոսին օգնեն եւ կատարեն այն ինչ որ կը հրամայուի իրենց»: Եւ վերջապէս, Առաքելական Ուսուցումը կ'ըսէ, որ սարկաւագները պէտք է ըլլան եպիսկոպոսին ականջները, բերանը, սիրտն ու հոգին:

բ. Հովուական: Սարկաւագներուն այս պաշտօնը կ'ընգրկէր հիւանդներուն, աղքատներուն, չքաւորներուն, մասնաւորաբար այրիներուն եւ որբերուն, եւ բանտարկեալներուն այցելութիւնը՝ եպիսկոպոսին տեղեկացնելով անոնց պէտքերը եւ մատակարարելով եկեղեցւոյ ողորմութիւնը (զրամական օգնութիւն): Սարկաւագներու պարտականութեան մաս կը կազմէր նաեւ հսկել ծխականներու հոգիներուն եւ տեղեկացնել եպիսկոպոսին այն պարագաները, որոնք մեղաւոր են կամ հոգեկան հանդարտութեան պէտք ունին: «Դով՝ սարկաւագներդ, կ'ըսէ Առաքելական Սահմանադրութիւնը, պէտք է հսկէք բոլոր անոնց վրայ, որոնք պէտք ունին հսկողութեան կամ անոնց վրայ, որոնք ծայրայեղ տառապանքի մէջ են եւ եպիսկոպոսին տեղեկացնէք»:

Հիւանդանոցներու եւ այլ բարեգործական կազմակերպութեանց հաստատումով, սարկաւագներու պաշտօնը նշանակալից կերպով սահմանափակուեցաւ: Երբ եկեղեցւոյ ընկերային կեանքը ուրիշներուն փոխանցուեցաւ եւ կամաց-կամաց սարկաւագութիւնը կորսնցուց իր կարեւորութիւնը եւ մինչեւ իսկ սկսան նկատուիլ իբրեւ ստորադաս պաշտօնեաներ հասարակ պաշտամունքին եւ դէպի քահանայութիւն տանող ճամբուն առաջին քայլը:

Իրենց հովուական պարտականութեան լոյսին տակ, սարկաւագութեան պաշտօնին պատրաստուողին նկարագրի ընդգծումը, մատնանշուած Ա. Տիմոթէոսին մէջ, յարմար է, որովհետեւ իրենց անընդմէջ այցելութիւնները ժողովուրդին մէջ եւ իրենց պատասխանատուութիւնները եկեղեցւոյ նիւթական մատուցումին մէջ, շատ մը փորձութեանց առիթ կու տային սարկաւագներուն եւ իրենց ընտանիքներուն, ինչպէս բամբասանք, ազահութիւն, զրպարտութիւն եւ անժուժկալութիւն: Իգնատիոս Հայրապետ անոնց հովուական այս պաշտօնին ակնարկելով, կ'ըսէ.

«Հետեւաբար, ձեզի համար ազնիւ բան մըն է, իբրեւ Եկեղեցի Աստուծոյ, ընտրել սարկաւագ մը, որ առաքելութեամբ հոն երթայ, իբրեւ Աստուծոյ ներկայացուցիչը եւ պաշտօնական ծառայութեան մը ատեն շնորհաւորէ զանոնք եւ փառաւորէ Անունը»:

Սարկաւագներու այս պաշտօնին մաս կը կազմէր նաեւ եկեղեցւոյ սեփականութեան վերատեսութիւնը եւ եկեղեցւոյ ելեմուտքի տնտեսութիւնը:

գ. Քարոզչական: Ներկայ ժամանակներուն, ձեռնադրութեան ժամանակ սարկաւագներուն քարոզելու իշխանութիւն չի տրուիր: Գործք Առաքելոցէն գիտենք, որ Ստեփանոս (Գործք 7.1-53) եւ Փիլիպպոս (8.26-36) քարոզեցին եւ նոյնիսկ Փիլիպպոս մըկրտեց Եթովպիացի ներքինին (8.37-40): Դարերու ընթացքին սարկաւագներ, միայն տեղւոյն հոգեւոր հովիւին կամ եպիսկոպոսին արտօնութեամբ կրնան քարոզել: Աստուածաբանական դպրոցներու մէջ, սարկաւագներ, որոնք քահանայութեան աստիճանին պիտի դիմեն, որպէս «փորձ» եւ «պատրաստութիւն» քարոզ կը պատրաստեն եւ կը «քարոզեն»: Հետաքրքրական է, այսօր գաղութի մէջ աշխարհական սարկաւագներ կրնան քարոզելու նոյն պաշտօնը կատարել, թերեւս եկեղեցւոյ բարձրաստիճան իշխանութեանց կողմէ քննարկուի այս հարցը եւ որոշում մը կայացուի:

Եզրակացնելով ըսենք որ առանց կասկածի, սարկաւագութեան պաշտօնը ծնունդ առաւ եւ զարգացաւ եկեղեցւոյ կեանքին մէջ իբր պատասխան մասնաւոր կարիքներու: Բայց անոր ներշնչումը վստահաբար Քրիստոսի օրինակն էր, որ «ոչ եկն առնուլ պաշտօն, այլ՝ պաշտել» (Մատթ. 20.28, Մարկ. 10.45, Յովհ. 13.1-17): Ծառայելու գաղափարը եւ ծառայելը կ'ընդգծեն Քրիստոսի ամբողջ ուսուցումը իր առաքելութեան մասին եւ

նաեւ իրմէ ետք, իր աշակերտներուն առաքելութեան մասին: Ի մօտի ունենալով որ Հաղորդութեան խորհուրդը եկեղեցւոյ արարողական կեանքին կարեւորագոյն խորհուրդն է եւ թէ եկեղեցական բոլոր պաշտօնները խորանէն սկիզբ կ'առնեն, կրնանք ըսել որ սարկաւագութիւնը նուիրապետական այն կարգն է, որ կը կենայ հաւատացեալ ժողովուրդին եւ եպիսկոպոսներուն ու քահանաներուն միջեւ:

Հետեւաբար, սարկաւագութիւնը «կարգն է հաստատուած առաքելութեան, Աստուծոյ եւ Քրիստոսի անունով, որուն ամբողջական յարգանք վայելողներն են, կատարելու գործնական եւ ուղղակի աշխատանք քահանայացած ժողովուրդին, որով սարկաւագները իրենք զիրենք պէտք է անվերապահօրէն ընծայաբերեն Աստուծոյ»:

Մարկոս Աւետարանի բառերով. «այլ որ կամիցի ի ձեռն մեծ լինել՝ եղիցի ձեռ պաշտօնեայ: Եւ որ կամիցի ի ձեռն առաջին լինել՝ եղիցի ամենեցուն ծառայ» (Մարկ. 10.43):

Հայաստանեայց եկեղեցւոյ բարեկարգութեան աշխատանքներու ծիրէն ներս նուիրապետական աստիճաններու բարեկարգումը, սարկաւագներուն մկրտելու եւ քարոզելու իրաւունքները վերահաստատելու կարելիութիւնը եւս լուրջ եւ առարկայական մտածողութեան նիւթ պէտք է դառնայ Եպիսկոպոսական ժողովի համար: Այս բոլորի կողքին, այս օրերուս, երբ Հռոմէական եկեղեցին կ'արծարծէ իգական սեռին առջեւ սարկաւագութեան աստիճանը բանալու կարելիութիւնը, ինչո՞ւ մեր եկեղեցին տակաւին քարացած պէտք է մնայ իր մտածողութեան եւ մօտեցումին մէջ:

Հայաստանեայց Առաքելական եւ Ուղղափառ եկեղեցւոյ մէջ, սարկաւագներուն կամ սարկաւագուհիներուն մասին գրեթէ ոչինչ գիտենք IX-X դարերէն առաջ: 1184-ին, Մխիթար Գոշ կը նկարագրէ սարկաւագուհիներ, որոնք Աւետարան կը կարդային եւ կը քարոզէին մայրապետարաններու մէջ եւ կիներու մկրտութեան ժամանակ ներկայ կը գտնուէին արարողութեան (Մեկնութիւն Պատարագի, 225-րդ գլուխ): 1299-ին, Ստեփանոս Եպիսկոպոս Օրբէլեան (մահացած 1304-ին), իր «Պատմութիւն Սիսական Նահանգին» գրքին մէջ (2-րդ գլուխ, Եկեղեցւոյ Կարգերուն մէջ), կը նկարագրէ սարկաւագուհիները որպէս Աւետարան կարդացող եւ քարոզիչ, բայց անոնց մկրտութեան մասնակցութեան մասին ոչինչ կ'ըսէ:

Սարկաւագուհին կը ծառայէր խորանին բայց ոչ միայն մայրապետանոցին մէջ, այլ ուրիշ եկեղեցիներու մէջ, բայց ան սարկաւագներէն անշատ կը կենար եւ Սուրբ Հնծաներուն չէր դպնար: Ան իր ուրարը իր աջ կողմը կը կրէր: XVII դարուն (մշակութային, հոգեւոր եւ վանական վերազարթօնքի շրջան մը Հայց. Եկեղեցւոյ մէջ), սարկաւագուհիները Հայաստանէն դուրս միայն Պարսկաստանի մէջ կը տեսնենք: XVII եւ XVIII դարերուն, սարկաւագուհիները կը գտնենք մայրապետանոցներու մէջ: Նոր Զուղայի Սուրբ Կատարինէ վանքին մէջ կազմակերպուած մայրապետանոց կար, հիմնուած 1623-ին, երեք մայրապետներու ժամանումով հին Զուղայէն: 1839-ին 16 մայրապետներ կային Նոր Զուղայի մէջ: Այս ժամանակաշրջանին, գոնէ երեք ուրիշ վայրերու մէջ մայրապետանոցներ կային, ուր սարկաւագուհիներ կը ձեռնադրուէին՝ Թիֆլիս, Շուշի, եւ Կոստանդնուպոլիս: Սարկաւագական ձեռնադրութեան աղօթքներուն մէջ, մանր ուղղումներ տեղի կ'առնեն, որուն ընթացքին ընծայեալին ապագայ քահանայական աստիճանին հասնելու բաժինը կը զեղշուի, որովհետեւ տակաւին Հայց. Եկեղեցին կիներուն քահանայական աստիճան չի շնորհեր:

Սարկաւագուհիներու ձեռնադրութեան հայկական աղօթքը շատ հաւանաբար առնուած է բիւզանդական աղօթքէն, հիմնուած Առաքելական կանոնին վրայ, վրացերէնէ

Թարգմանությունով, շատ հաճախեց VII դարէն ետք: XX դարուն Արեւելեան Ուղղափառ եկեղեցիներուն մէջ, սարկաւագուհիները կը գտնենք տարբեր անուններու ներքեւ, յատկապէս ընկերային եւ հոգեւոր ծառայութեան նուիրուած անհատներ, որոնք կը ներառեն մայրապետներ եւ միայն Հայց. եկեղեցւոյ մէջ խորանին ծառայող:

«Արարատ» ամսաթերթ, 1871, 9-րդ թիւին մէջ (էջ 302) հետեւեալ յայտարարութիւնը ունի. «ԳԱՅԻԱՆԷ ԱԻԱԳ ՍԱՐԿԱԻԱԳՈՒՅԻ, Վեհ. Կաթողիկոս (Գէորգ Դ.), բարեհաճեցաւ ոսկեթել ծոպով՝ զարդարեալ մի սաթեայ համրիչ ընծայել Տփիսիսայ Ս. Ստեփ. Վանուց Կուսանոցի Վանահայր Համեստափայլ Գայիանէ Աւագ սարկաւագունույ Բէհպութեանց ի վարձատրութիւն անձնանուէր ջանիցն վասն շինութեան եկեղեցւոյ յիշեալ վանուց, եւ ի քաջալերութիւն հաստատելոյ եւ բարեկարգելոյ զօրիորդական դպրոց մի ըստ առաջարկութեան Նորին Վեհ. Օծութեան»:

XX դարուն, Հայց. եկեղեցւոյ մէջ Քոյր Հովիտի մէջ Սասունեան (մահացած 2007-ին), վերջին ձեռնադրուած սարկաւագուհին էր, որ նաեւ գործօն մասնակցութիւն ունէր ընկերային ծառայութեան մէջ: Կոստանդնուպոլսոյ մէջ, ան Գալֆայեան Որբանոցին պատասխանատուն էր, եւ Պատրիարքարանի հաշուապահ, ծառայելով զանազան գաղութներու մէջ Կիրակի օրերուն: Յետագային ան, Գարեգին Բ. Կաթողիկոսի կոչին ընդառաջելով, հաստատուեցաւ Լիբանան եւ ծառայեց Թռչնոց Բոյնին մէջ:

2017-ին, Թեհրանի առաջնորդ՝ Գերշ. Տ. Սեպուհ Արք. Սարգիսեան, Թեհրանի Սուրբ Սարգիս եկեղեցւոյ մէջ սարկաւագ ձեռնադրեց երիտասարդ հայուհի մը, որ արհեստով anesthesiologist է: 2015-ին, հարցազրոյցի մը ընթացքին, Արամ Ա. Կաթողիկոս խօսեցաւ Հայց. եկեղեցւոյ շրջագծէն ներս իգական սեռի եւ սարկաւագուհիներու դերերուն մասին՝ ըսելով. «Աւանդութիւնը շատ կարեւոր է, բայց աւանդութիւնը պէտք է քայլ պահէ փոխուող ժամանակներուն եւ իրականութեանց հետ, ինչպէս նաեւ եկեղեցւոյ ժողովուրդին ակնկալութիւններուն հետ»:

Իրենց պարտականութիւնները ամբողջացնելու համար, սարկաւագուհիները կ'օժանդակեն եպիսկոպոսին եւ երէցներուն: Արեւելեան Ուղղափառ եկեղեցիներուն համար, տարբեր պատճառներով, սարկաւագուհիներուն կարիքը կը զգացուի հոգեւոր դաստիարակութեան եւ առաքելական աշխատանքներու մէջ: Արեւելեան եկեղեցիներու համար (Ղպտի, Ասորի, Եթովպական, Հնդկական, եւ Հայ Առաքելական) աննախընթաց արժէք կրնայ ունենալ յատուկ հանդիպումներ կազմակերպելը այս նիւթին շուրջ, ուր կարծիքներու եւ փորձառութիւններու փոխանակում տեղի կ'ունենայ եւ կը վերանորոգուի կանանց սարկաւագական աստիճանը՝ նկատի ունենալով անոնց յատուկ եւ կարեւոր ներդրումը այս բոլոր եկեղեցիներուն հոգեւոր եւ հովուական կարիքներուն համար, ի մասնաւորի այս եկեղեցիներուն այն համայնքներուն մէջ, որոնք կը գտնուին Սփիւռքի մէջ: Տակաւին շատ գործ կայ այս աշխատանքները արդիւնաբերութեան հասցնելու, եւ հաճախեալ, Արամ Կաթողիկոսի «Սփիւռքի Տարի - Վերակազմակերպում»-ի կոչին մէջ սարկաւագուհիներու աստիճանը իր արժանաւոր տեղը կրնայ գրաւել եկեղեցւոյ ծառայական կերպին մէջ:

Առաջին քայլը սարկաւագուհիներու աստիճանին պատմական առարկայական քննարկում կատարելն է՝ այսինքն Արեւելեան Ուղղափառ եկեղեցիներու աղօթքներուն ու ձեռնադրութեան պաշտօնի նիւթերը կարդալն է: Այս եկեղեցիներուն մէջ սարկաւագուհիներու աստիճանին վերահաստատման գլխաւոր վախը այն է, որ ասիկա յետագային պատճառ պիտի դառնայ կանանց քահանայական եւ եպիսկոպոսական աստիճաններ:

րուն բարձրացնել: Կանանց սարկաւազական ձեռնադրութիւնը սրբազան ձեռնադրութիւն չէ, ինչպէս է պարագան քահանայական եւ եպիսկոպոսական ձեռնադրութեանց, որովհետեւ կանանց սարկաւազական աստիճանը տարբեր պարտականութիւններ եւ պատասխանատուութիւններ կը ներառնէ: Միւս կողմէ կանանց սարկաւազական աստիճանի վերահաստատումը հրամայական անհրաժեշտութիւն մըն է: Այսպիսի հարցումի մը լուծումը, ինչպէս արդէն ըսինք, եպիսկոպոսական ժողովի քննարկման պէտք է ենթարկուի եւ լուծում մը յառաջացնէ նկատի ունենալով եկեղեցւոյ այժմու կարիքները:

ՆԱԽԱՍԱՐԴ ՄԱՐՏՈՅԵԱՆ

Փրոֆ. փիլիսոփայութեան եւ բաղդատական կրօններու

Օգտագործուած Աղբիւրներ

1. Հ. Աճառեան, Հայերէնի արմատական բառարան, Երեւան, 1926:
2. Հ. Գ. Աւետիքեան, Հ. Խ. Սիւրմէլեան, Հ. Մկրտիչ Աւգերեան, Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Վենետիկ, 1837:
3. Ստ. Մալխասեանց, Հայերէն բացատրական բառարան, Երեւան, 1944:
4. Black, A & C (ed.) *Encyclopedia Britannica*, (1973). vol. 7 – 8.
5. Bylander, Fr. Mark (translator). *Didache: The Teaching Of The Twelve Apostles*. (Fifth Estate. 1965)
6. Cross, F. L. (ed.) *The Oxford Dictionary of the Christian Church*. (Oxford University Press, 1958).
7. Cross F. L. & Livingstone, E. A. (ed.) *Dictionary of the Christian Church*. (Oxford University Press, 1959).
8. Davis, J. G., “*Deacons, Deaconess and the Minor Order in Patristic Period*,” JEH, XIV (1963).
9. F. J. A., *The Christian Ecclesia*, (1897).
10. Hanks, Patrick & Potter, Simeon (ed.). *Hamlyn Encyclopedic World Dictionary*. (Golden Books Publishing Company, 1971).
11. Hornby, Albert Sydney (ed.) *The Advanced Learner’s Dictionary of Current English*. (Oxford University Press, 1984).
12. Kirk, K. E., (ed.). *The Apostolic Ministry*, (1946).
13. *Oxford American Dictionary*. (1972).
14. Rahner, Carl & Vorgrimmler, Herbet. *Dictionary of Theology*.
15. Richardson, Cyril C. (ed.) *The Library of Christian Classics: Early Christian Fathers*. (Westminster John Knox Press, 1972).
16. *The Interpreter’s Bible*, (Rosemary Pugh Books, 1952) vol. IX.
17. *The Ministry of the Deacons*, world Council Studies, §2 (1965).
18. Watson, O.C., *Larousse Illustrated International (Encyclopedia and Dictionary)*. 1972.